957

1. Մինչև ե՞րբ, ո՛վ Տեր, Դուն զիս
Պիտ մոռնաս բոլորովին,
Մինչև ե՞րբ Քո երեսը
Ինձմե Դուն պիտի ծածկիս,-
Մինչև ե՞րբ ես մտքիս մեջ
Ամեն օր տրտում լինեմ,
Մինչև ե՞րբ իմ թշնամին
Ինձ վրա պիտի բարձրանա:
Նայե՛, ով իմ Աստվածս,
Ու պատասխան տուր ինձի:

Տե՛ր, լուսավորիր իմ աչքերը Քո սուրբ լույսով,
Որպեսզի մահվան քունը չքնանամ,
Չըլլա թշնամին ըսե, թե՝ հաղթեցի անոր
Կամ թե նա խնդա իմ սասանվելու ատեն:

2. Սրտիս մեջ խաղաղություն,
Մարմնիս մեջ հանգստություն
Չկա մեղքիս պատճառով,
Բայց ես Քեզ եմ, Տե՛ր, ուզում,
Ու սիրտս Քո փրկությամբ
Հավիտյան պիտի ցնծա,
Պիտ երգեմ ես շարունակ,
Տիրոջը սաղմոս ըսեմ,
Վասնզի Նա ինձ մեծ
Բարերարություն ըրավ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025